


# Օրացում

1987 1,2



ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԸ  
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ  
ՀՈԳԵՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱԳՈՅՆ ԿԵՆՏՐՈՆՆ Է

# Ա Կ Ե Ա Ր Կ

է 7. ԳԵՐՄԱՆԻԱ

## ԻՐԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Հայ եւ իրանյան ժողովուրդների դրացիական պատմությունը մի քանի հազարամյակների է հասնում: Նրանք այդ երկար ժամանակաշրջանի ընթացքում ունեցել են սքանչելի մոտ փոխհարաբերություններ պատմական եւ մշակութային բոլոր ասպարեզներում: Այսօր, օրինակ, երբ պարսկերենը գրկվելով իր նախնական յուրահատկություններից, եւ դռնաբանով զանազան լեզուների ազդեցության միջոցով, հայերենը կարողացել է դարձնել ընթացքում արեւմտեան հին պարսկերենի փոխառությունները եւ ի վիճակի է ստատ հանդիսանալու ժամանակակից պարսկերենի վերականգնման գործում:

Ուրեմն, ի նկատի առնելով այդ հանգամանքը, երկու ժողովուրդների համար անհրաժեշտ է ավելի խոր մտնելով ծանոթանալ միմյանց հոգեւոր աշխարհի յուրահատկություններին: Ուստի հարկ ենք համարում հանցիկ ներկայացնել իրանյան գրականության իսլամական շրջանի պատմությունը, ծաղկաբույսնելով նրա գրական կարկառուն դեմքերի ստեղծագործություններից:

§ § §

Սասանյան պետության անկումից եւ իրանում իսլամի հաստատվելուց հետո, աստիճանաբար միջին պարսկերենը ազդվելով արաբերենից, ծնունդ տրվեց նոր պարսկերենին՝ Դարի լեզվին: Այս լեզվով որպէս առաջին ստեղծագործիչներ հանդես եկան Հանգալե Բաղդեստից (حنظله بادغيسى) (մահը 841 թթթթ) Աբու-Սոլայթ Գորգանցի (ابوسليك كركاني) (9-րդ դ.), Աբու Հաֆաթ Սողդեցի (ابوحفظ سندي) (9-րդ դ.) եւ Շահիդ Բալիեցի (մահը 937թ.): Վերջինից է մեզ հասել հետեւյալ տողերը.

Եթե վիշաք կրակի պես ծուխ ունենար,  
Աշխարհը կմթներ առ հավիտյան.  
Եթե շրջես ողջ աշխարհն՝ անծայր-անծիր,  
Չես կարող զանել անգամ ուրախ մի գիտուն:

1-Բաղդեստ- Հերաթ քաղաքի շրջաններից:  
2- Սողդ- Սամարղանդի մոտակայքում մի քաղաք (Մավերեննար):  
3- Բալի- Հին իրանի հյուսիս արեւելյան նահանգներից համանուն կենտրոնով:

Ռուղաքին նրա մասին գրել է՝  
Մահացավ, զնաց Շահիդ Բալիեցին,  
Մարդկանց հաշիվը նորից հաշվեցին.  
Բուրորի աչքից մի թիվ նվազեց,  
Իսկ մտքի հաշվից՝ հազար զնացին:  
(Թարգ. Ս. Ումադյանի)

Սասանյան իշխանության շրջանի ամենահանճարեղ եւ ակնառու գրական դեմքն է՝ Ռուղաքին (Աբու Աբդելլահ Զադճար էբն Մոհամմադ Ռուղաքի Սամարղանդի)<sup>4</sup> (ابو عبدالله جعفر بن محمد رودكى سمرقندى):

Ռուղաքիի ծննդյան թվականի մասին ստույգ տեղեկություն չգոյություն ունի, սակայն նրա մահը տեղի է ունեցել 10-րդ դ. կեսերին: Նրա բարեկամ եւ ընկերն է եղել վերոհիշյալ Շահիդ Բալիեցին:

Նրա ծննդավայրն է Ռուղաք գյուղը Սամարղանդի շրջակայքում: Ասվել է, որ նա կույր է ծնվել, սակայն նրա որոշ քանաստեղծություններից, որոնց մեջ նկարագրվում են առարկաների միշտ պատկերներն ու հատկանիշները, հակառակ է ըստացվում: Ռուղաքին ունեցել է քաղցր ու սքանչելի ձայն, երգել ու նվագել է շանգ: Նա գովերգել է նասր-էբն Ահմադ-էբն Համայիլ Սամանիին<sup>5</sup>:

Ռուղաքին իրանի առաջին քանաստեղծն է, որ արժանացել է ,,քանաստեղծների վարպետ,, եւ ,,քանաստեղծների արքա,, պատվո կոչումների: Նա առաջին գրողն է, որի ստեղծագործությունները աշխարհիկ բնույթ են կրում եւ հեռու են միջափոխից: Նա պարսկալեզու գրականության մեջ ռեալիզմի հիմնաքարը դրեց եւ ապրեց ու ոգեւորվեց ժողովրդի հանճարեղ ստեղծագործություններով:

Նա գրել է քազմաթիվ ժանրերով, ստեղծագործել քառյակներ, զազելներ, քիթաներ, բեյթեր, քասիդներ. գրել է սիրո, գինու, մայվան, գեղեցկության, բնության, կյանքի եւ այլ երեւույթների մասին:

4- Միջին Ասիայի հին քաղաքներից:  
5-Սասանյան պետությունը կազմակերպվեց 875 թ. իրանի հյուսիս-արեւելյան մասում Մավերեննահարում եւ տեւեց մինչեւ 999թ.:

Ուղղաթիւն ունեցել է 6 պոեմներ, որոնցից ամենախոշորը 12000 բեյթից բաղկացած «Կալիլեա եւ Դիմնա», (كليله و دمنه) պոեմն է ( 932 թ.), որը հնդկերենից պահպանելով, ապա արաբերեն էր թարգմանվել եւ նա փոխադրելով, դրան չափածոյի էր վերածել եւ այսօր ցավոք սրտի, նրանից մեզ են հասել միայն չնչին պատահիկներ, որոնք քանակը 2000 տողից չի անցնում: Ստորեւ տալիս ենք նրմուլշներ նրա ստեղծագործութիւններից ( փակագրծում արվում է թարգմանչի անունը):

\*\*\*

Ում առաջ որ վշտեր կան շատ, այդ մենք ենք,  
 Ում սրտում որ վերքեր կան շատ, այդ մենք ենք,  
 Մենք կապված ենք բախտի խելառ խաղերին  
 Եսվում ալիք, խաղեր կան շատ, այդ մենք ենք:

\*\*\*

Մենք բոլորս անցավոր ենք այս աշխարհում,  
 Ենված օրից հանցավոր ենք այս աշխարհում.  
 Մահվան ձեռքի սուր գերանդին մեզ կսպասե,  
 Սեւ հողի հետ մերձավոր ենք այս աշխարհում:

\*\*\*

Իր գոյութիւնս հենց սկզբից պտտվում է  
 աշխարհն այս,  
 Եվ ամեն մի նոր պտուղտից փոփոխվում է  
 աշխարհն այս:  
 Այնտեղ, որտեղ դեղեր շատ կան, նա բերում է  
 է եւ ցավեր,  
 Երբ երես է թիրում հնից, նորանում է  
 աշխարհն այս:  
 Օ, հնչքան շատ ավերակներ դարձրել է  
 նա ծաղկանոց  
 Եվ շարունակ, ամեն կողմից, ավերում է  
 աշխարհն այս:

\*\*\*

Կարժ է, թե երկար, հնչ օգուտ կյանքից,  
 Մահը պիտի գա, տանի աշխարհից:  
 Վերջ կաա նույնպես կյանքի շղթային,  
 Թեկուզ երկար է թվում բոլորից:

Ապրես իղձերով ու տանջանքներով,  
 Նլես աշխարհի անբավ գանձերից, 6

Թեկուզ վերցրնես Ռեյից թարգա,  
 Կամ բաժինհանես մի չնչին մասից,

Կյո ամբողջ կյանքը երազ է մի պահ.  
 Իսկ թե երազ է չի դառնա նորից:

Մահվան օրը գա, մեկ է քեզ համար,

6-Միջին Ասիայի հին քաղաքներից:

Դու չես տարբերի լավ կյանքը վատից:

\*\*\*

Ուրախացիր դու սեւաչյա սիրուհու հետ  
 միասին,  
 Դատարկ հեքիաթ է ու քամի այս աշխարհը  
 լայն ու սին:  
 Տխուր անցավ անցյալը մեր, պետք չէ անգամ  
 այն հիշել  
 Հպարտ եղիր ու մտածիր զալիք օրերի  
 մասին,  
 Գեղեցիկ է իմ սիրուհին, խոպոպները  
 սեւաթուլր,  
 Արծաթի պես նա դեմք ունի, հոնքը ինչպես  
 կեռ լուսին:  
 Ինչ տալիս են, այն ընդունիր, որ երջանիկ  
 լինես միշտ,  
 ,,Ով չի տալիս ու վերցրնում հիմար մարդ  
 է,, ինձ ասին:  
 Այս աշխարհը ամպ ու փռչի, փուչ հեքիաթ  
 է ու քամի,  
 Ինչ լինում է, թող որ լինի, խփիր թասդ  
 իմ թասին:

\*\*\*

Մուլշան<sup>7</sup> գետի մոտ փերը ինձ են կանչում,  
 Բարեկամի սիրտն ու սերը ինձ են կանչում:  
 Մետաքսի պես Ամու գետի ավազները  
 Ու խորդուբորդ ծամփաները ինձ են կանչում:  
 Զեյնուն գետը, ուր սուզվում են մեր ձիերը,  
 նրա վճիռ, զով ջրերը ինձ են կանչում:  
 Զեզ է զալիս մեծ էմիրը, իմ Բուխարա.  
 Երկրի բախտն ու երկրի տերը ինձ են կանչում  
 Մեր էմիրը մի լուսին է, իսկ Բուխարան<sup>8</sup>  
 Անծայր երկինք, լույս աստղերը ինձ են  
 կանչում:

Մեր Բուխարան մեծ պարտեզ է. տերը նոմի.  
 Սեզ նոմին ու պարտեզները ինձ են կանչում:

Ս. Ումառյան

\*\*\*

Կալիլեա եւ Դիմնա  
 ( Հատվածներ պոեմից )

\*\*\*

Ոչ չի սովորել, դաս առել կյանքից,  
 Չի սովորի ոչ մի ուսուցչից:

\*\*\*

7-Միջին Ասիայի գետերից մեկը:

8- Միջին Ասիայի հին քաղաքներից:

Համախ խորագես զղջացել են ես սասծիս  
համար,  
Ավելի համախ ուրախացել են չասածիս  
համար:

\*\*\*

Գարնանը կայծակն եթե չժպտա,  
Ամառն ինչպե՞ս արցունք թափի, որոտա:

\*\*\*

Աստված է նա, ով նման չէ ոչ մեկի  
Դու աստված չես, բայց նման չես ոչ ոքի:  
(Մ. Խերանյան)

Աբու Եթրուր Բալիսեցի: ( ابو شكور بلخي ) 10-րդ  
դարի առաջնահազարկվող բանաստեղծներից է, որ  
ապրել է Կաս-էքն նասր Սամանի իշխանի արքու-  
նիքում. նրանից շուրջ 150 բեյթ ( երկտող ) մեզ  
է հասել, որոնցից այդ սակավաթիվ բանաստեղծա-  
կան պատճենները բավական են նրա գրական բարձր  
վաստակին վերաբերու համար:

Աբու Եթրուրին է վերագրվել ,, Այարին նամե,  
( Գովաստան ) պոեման: նա եղել է իր ժամանակի  
փիլիսոփայի և մտքի նշանավոր ներկայացուցիչ-  
ներից մեկը: Բալիսեցիի ապրած տարիները համընկը  
նում են Ռուզբեհի կյանքի վերջին, իսկ ֆերզու-  
սիի ժամանակաշրջանի սկզբնական տարիներին: Նը-  
րանից են հետևյալ տողերը.

Գիտունն ասում է խելքն է արքա  
Որ հշիտում է նա ողջ մարդկության,  
Խելքը կճառայի մարդուն որպես մի սպահ  
Կիրքնու հղճրհու հպատակ են նրան:  
Գիտությամբ ենք կարող աշխարհ մաշաչել  
եվ նրանով քարքարուտները հարթել:

Աբու Մանսուր Դադիզի ( ابو منصور دقديسي )-ն  
Սամանյան շրջանի վերջին հազարավոր բանաստեղծն  
է: նրան պիտի համարել երկրորդ գրական դեմքը,  
որ ծեղնամուտի է եղել ,, Շահնամե ,, -ի ( Գիրք թա-  
զավորաց ) բանաստեղծական ստեղծագործության:  
( առաջինը Աբու Մորայեդ Բալիսեցին 10-րդ դար ):  
Դադիզիի ծննդյան թվականը պարզ չէ, սակայն  
10-րդ դարի առաջին կեսի տարիները ավելի հավա-  
նական են թվում: Տարբեր գրողներ արտահայտվել  
են նրա մասին, եւ նրան թուսեցի,<sup>10</sup> Բալիսեցի եւ  
Սամարղանդցի համարել: Դադիզին հավատարիմ էր  
մյացել իր պապենական դավանանքին՝ գրադաշտակա-  
նության:

Նա Սամանյան Նուհ-էքն Մանսուր իշխանի հանձ  
նարարությամբ սկսեց իր Շահնամեի շարագրումը,  
սակայն դեռ 1000 բեյթ ( երկտող ) չգրած, երի-

ասարդ հասակում իր ծառայի ձեռքով սպանվեց:

Դադիզին անշուշտ 10-րդ դարի գրական ամենա-  
ակնառու դեմքերից մեկն է. նրա լեզուն սահուն  
է եւ մոխ՝ զեղեցիկ պատկերներով: ֆիրզուսին նը  
րա ,, Գուշասագ եւ Արջասագ ,, պոեման զետեղել  
է իր ,, Շահնամեում ,, :  
Նրանից է՝

Բահտանիվը ականջ դրել, լսում է,  
Թե իր տերը ինչ հրաման է տալիս.  
Նրեւակը նրա պատկառանքից չգիտե,  
Որ երկնքում ինչպես պիտի պտտե:

Հեթիմ Քասայի Մարվեցի<sup>12</sup> ( محکم کسائی مروزی )  
10-րդ դարի պարսից գրականության նշանավոր դեմ  
քերից մեկն է: Ծնվել է Նույն դարի վերջերին  
Մարվ քաղաքում: նրա բանաստեղծութունները  
հայտնի են նրա գեղությամբ եւ զեղեցիկ պատկեր-  
ներով:

Քասային երիտասարդ տարիքում զովերգիչ է ե-  
ղել, գրելով բազմաթիվ ներբողականներ, սակայն  
իր կյանքի վերջին տարիներում զղջալով այդ ձե-  
վից, անցել է իրատական ստեղծագործության: Կախ-  
մանվել է 11-րդ դարի սկիզբներին: նրանից է՝

Ծաղիկները պարզեւներ են մեծ, դրախտից,  
Մարդու հոգին կայտառ է դառնում նրանցով.  
Ո՞վ ծաղկավաճառ, ի՞նչ ես շահում ստակից,  
եվ անարգում ծաղիկին, քանի սեւ ստակով:

( Շար. 1 )

\*\*\* \*\*

9-Ավելի միջառ մեզ այսպես է թվում, որ "շահ"  
( šāh ) բառը արմատակից լինելով պահլավերեն  
šahr, šatr եւ šahr-ի հետ նշանակում է  
,, երկիր ,, նույնը հայերենում որպես "աշխարհ"  
ուրեմն Շահնամե կնշանակի ( իրան ) աշխարհի պատ-  
մություն:

10-Խորասանի հին քաղաքներից:

11- Գուշասագը Քիանյան դինաստիայի 5-րդ թագա-  
վորն էր, որի ժամանակ հանդես է եկել Ջրադաշտը  
եւ նա ընդունելով վերջինիս ուսմունքը տարածել  
է այն, իսկ Արջասագը Աֆրասիաթի ( Թուրանի թագա-  
վոր ) շահափղիներից եւ Գուշասագի եւ գրադաշտա-  
կանության թշնամին:

12-Մարվ- Հին Խորասանի քաղաքներից: